


Ըլանկայ¹ պախալ եղբայր ունի . նա
և տեսանելն զմեզ յոյժ ուրախացաւ .
և է անուն տնտեսին Եօրկոյ . և ըռէի-
ղին անունն² . Գիշեր մի պառկեցաք ,
երկու գառ կերանք . և առաւօտն տօշ-
կին մէջն երեք զրախին³ . և հանդերձ
մէգէով . իջաք 'ի վայր ուխտ արաք . և
անտի կամեցանք գնալ 'ի վանքն : Նա
տեսանեմք էշ մի պատրաստեալ և հե-
ծայ . մի կողմն վանից եասախճին . և
միուս կողմն վանից Ֆէլլահն մինչև 'ի
պիւրքէն բերին . և ես նոցա փարայ ե-
տու պախիշ . նոքա ուրախութեամբ
գնացին իւրեանց վանքն . և մեք նստաք
Անարծաթի քով զէթունի ծառի մի
ներքոյ . ունէաք խոչան ըմպիթ , զայն

ևս հոն խմեցաք . և ապա բերկրու-
թեամբ եկաք 'ի սուրբ Յակոբ , որ այս
օրս ըխտաւորք 'ի Բեթանիայ գնա-
ցեալ էին : Այսքան :

Կը Հարութակուի :

Անցեալ տարուան Աշխարհաճանդէսը

Եթէ ներկայ դարս ալ իր հանդէս-
ներն ու յիշատակներն ունի որովք յազ-
գաց յազգս պիտի չմուցուին՝ իրենց
իրբն կոթող և արձան վկայ ձգած կա-



Ընդհանուր յատակագիծ Աշխարհաճանդիսին :

ռուցմունքներովը , անշուշտ ենք որ ա-
տոնց մէջ գլխաւորներէն մէկն ալ է ան-
ցեալ տարուան Աշխարհահանդէսը , ո-
րուն վրայ իբրև նոր և զարմանալի ինչ
մը միշտ կրնայ խօսուիլ ու պիտի խօ-
սուի : Եւ եթէ մենք հիմա հնոց բաւիդ
ներուն , բուրգերուն և կողոսէմներուն
վրայ կը սքանչանանք , ո՞չ արդեօք մեր
ապագայիցը մեծաց զարմանաց հետ

մեծագոյն գովեստից և շնորհակալու-
թեանց նիւթ պիտի ըլլան , ինչպէս
դարուս հսկայաբերձ զրահապատ շո-
գեշարժ նաւերը , և շոգեկառաց մե-
ծաշէն և հոյակապ կայարանները , և
ուռկանաձև աշխարհաճիգ երկաթեայ
ուղիները , — որովք հին և նոր աշխարհը
ները գրեթէ անանջրպետ իրարու հետ
միացած կը սեպուին , և օրըստօրէ հա-
ղորդականութեան դիւրութեամբ բեւ-
ռէ բեւռ նոր երկիրք և ժողովուրդք՝ նոր
ստացուածք կ'ըլլան մարդկութեան և

1 Վլանկա :

2 Գրուած է :

3 Բաբ , օղի :



Նախադրուշք Աշխարհաճանաչիսին¹ .

իրեն քաղաքակրթութեանը . — նոյնպէս նաև հաւասարապէս աշխարհահանդի .

¹ Երբորդ և չորրորդ պատկերներուն տակ միջոց չմնալով ներկայացուցած տեսարաններն գրով ծանօթացնելու , կ'իմացնենք հոս որ անոնցմէ առաջինն է ծաղկանց պարտիզին կամ Բուրաստանին

սից ամբարտակ պալատներն ալ , բովանդակ մարդկութեան արուեստից և ճարտարութեանց դարազլխին ներկայ .

մէկ մասը , և երկրորդը՝ Աւազան ձկանց և անկոյնոյն Բուրաստանին մէջ :



ացուցիչն ու յիշեցուցիչն ըլլալով՝ այն պիտի խրախուսանաց և օգտակարագոյն միջոցի մը՝ որով հանճարը և տաղանդը իրենց կապանաց ամենայն սանձերը թօթափելով, յառաջադիմութեան ընթացից քայլերնին կարծես թէ իրենց մեքենայից շարժմանցն համեմատ կ'երագեն:

Իրաւցնէ՝ բովանդակ աշխարհս ըստ էական ամենայն յատկութեանցը կեդրոնացնել 'ի Բարիզ, ներկայ և հին դարուց ամենայն ճարտարութեանց ու արուեստից արդիւնքը 'ի տեսիլ ածել, ամենայն ազգաց և ժողովրդոց բարուցն ու սովորութիւնը ճշգրիտ գաղափարը տալ, ըստ տանց կահ կարասեաց և բռնակութեան կերպի, ըստ հանդերձեղինաց, կերակրեղինաց¹ և այլն և այլն, ամենայն տեղեաց բնութիւնն իսկ կերպարանել. և համառօտ՝ զաշխարհ փոքրրկացնել գոգցես իմն՝ ի միջոցի, կամ թէ միայն անոր գիտութեան և տեսութեան արժանաւոր և գեղեցիկ մասերը 'ի մի վայր բերել կուտել մեծաւ կարգաւորութեամբ և ախորժով՝ ամենամեծ և ամենաօգտակար գործ մի էր, և միանգամայն այնպիսի հրաշալի մտածութիւն մը՝ որ քիչ ատենի մէջ գլուխ հանուելով՝ թերեւ միայն գաղղիական ազգին և Նաբոլէոն Գ կայսեր գահակալութեան ժամանակին վերապահեալ:

Մենք՝ ինչպէս նաև ազգային այլ և այլ օրագիրք ու լրագիրք, ըստ արժան բաւականին խօսած ըլլալով այսպիսի վեհ և շահաւէտ ձեռնարկութեան մը սկզբնաւորութեանը ու յաջողութեանը վրայ, և չուզելով կրկնաբանութեամբ մեր ընթերցողները ձանձրացունել, մըտածեցինք այս անգամ մէկ քանի այսպիսի սուղ տեսութեամբք այն մեծակերտ շինուածոյն քանի մը գլխաւոր

կտորներուն պատկերները օրագրիս մէջ դնել, վերջին անգամ ազդու տպաւորութեամբ մը յիշեցնելու համար այն աշխարհահանդիսին զարմանալիքը, որ անհամեմատ առաւելութեամբ գերազանցեց և գրեթէ մոռցնել ալ տուաւ իրեն ամենայն նախընթացները. և մանաւանդ կրկնապատիկ յիշատակաց իրաւունք ունեցաւ, Եւրոպայի գրեթէ ամենայն առաջին կարգի կայսերաց և թագաւորաց գլխաւորապէս այս վախճանաւ Գաղղիոյ մայրաքաղաքը ըրած այցելութեամբը. որոնցմէ ոմանց վրայ մեծամեծ օգտակար ազդեցութիւններ ալ եղան, ինչպէս վեհափառ Սուլդանին վերջերս շնորհած փափաքելի ազատութիւններէն կամ արտօնութիւններէն ալ կրնայ տեսնուիլ, որուն համար պէտք է շնորհակալ ըլլանք մեծապէս Սուլդան Ապտիւլ Ազիզի՝ իր հպատակաց կացութիւնը լաւցնելու համար ունեցած արթնամիտ և վեհանձն վարչութեանը հետ, նաև այնմ շարժիչ և առիթ եղողին:

Այս առթիւ կ'իմացնենք նաև ոչ 'ի պարծանս ինչ անձանց՝ այլ 'ի մեծ շնորհակալութիւն գաղղիական ազգին, որ ինչպէս մեր ազգէն գլխաւորապէս ՊՊ. Ապտուլլահանց և ՊՊ. Տէտէեանց գործատուները առանձինն առաջին կարգի միտալներով պսակեց, նոյնպէս նաև մեր տպագրատունն ալ՝ Նաբոլէոնի գործոյն Յուլիոս Կեսարու վարուց թարգմանութեանն ու մաքուր տպագրութեանը համար՝ արժան դատեցաւ առաջին աստիճանի արծաթեայ միտալով վարձատրելու, անչուտ խրախուսելու համար զկիսակենդան Արևելեայքս 'ի գործունէութիւն և 'ի կիրթ ընտիր ախորժակաց:

Փափաքելի էր մեզի նաև 'ի վերջէ գիտնալ ծանօթացնել եթէ քանի հազարաւոր կամ լաւ ևս միլիոնաւոր անձինք այցելուք եղան այս ճարտարութեան և գործունէութեան մեծահանճար ամբարանոցին, բայց կը ցաւինք որ մեզի ծանօթ օրագրաց ու լրագրաց մէջ այս նկատմամբ վիճակա-

¹ Ըսածնուս ստուգութիւնը հաւաստելու համար թէ ինչպէս ամենայն ազգաց սովորութիւնքը մանր գիտողութեամբ բովանդակուած էին, յիշենք հոս որ Տաշկաստանի ասիական մէկ մասին մէջ մէջի հայ խոհարար մըն ալ կար, որ անգամ Բիւլֆ կ'եփէր և այցելուաց կը հրամցընէր:



զրական տեղեկութեան մը բնաւ չհան-
դիպեցանք, որ անշուշտ շատ հետա-
քրքրական կրնար ըլլալ նաև մեր ըն-
թերցողաց:

Բա-տը-Ֆալէի վրայ կամուրջ մը:

Պիտի գայ ժամանակ, յորում մարդ-
կային յանդգնութիւնը վախնալով մը
կանկ առնէ. և կամ մեծագործութեան
ոգին պիտի մարի արդեօք մարդուս սըը-
տին մէջ:

Գիտութիւնը իր այս ետքի յիսնա-
մեայ շրջանին մէջ այնպիսի հրաշալիք-
ներ գործեց և այնպիսի անմահական
հրաշակերտներ բարձրացուց, որոնք՝
կրնանք ըսել թէ անկարելոյն գաղա-
փարը օտարացուցին մեր մտաց առ-
ջէն, և գրեթէ գրեթէ զմարդ ամե-
նայնի կարող կ'ուզեն կարծեցնել տալ:

Ասկէ ետքն ամեն տեսակ մտածու-
թիւն, և ամեն տեսակ առաջարկու-
թիւն կրնայ մարդս յղանալ և առաջ-
արկել, առանց հասարակաց ծիծաղը
շարժելու. և եթէ յետ մտադիր և գիտ-
նական քննողութեանց անտեղի ալ հա-
մարուի՝ բայց իսկզբան ոչ ոք կը հա-
մարձակի չենք կրնարք ըսել: Դարը՝
որ երկաթուղին հնարեց, ելեքտրական
հեռագրութիւն և լուսանկարը գտաւ,
ինչո՞ւ ասոնցմէ աւելի զարմանալիները
և օգտակարները պիտի չստեղծէ:

Ներկայ մարդկութեան արարքը իր
կարողութեան և հանճարոյն ապացոյցը
և հաւաստիքն են: Օրինակի համար կը
տեսնէ Ափրիկոյ և Ասիոյ մէջ ցամա-
քալեզու մը, և զանիկայ իւր շահուն և
յառաջադիմութեան խափանիչ ճանչ-
նալով, հրուման մը կը հանէ որ մէջտե-
ղէն անհետ ըլլայ. և ահա մէկէն 'ի մէկ
3000 գործաւորք գործինքը ձեռու-
նին առած կը պատռեն կը փլցընեն ցա-
մաքալեզուն, և Միջերկրականին ջուրե-
րը կ'երթան կը խառնուին կարմիր ծո-
վուն հետ: Նոյն մարդկութիւնը կ'ըսէ
զարձեալ. Մինչև երբ Ալպիքը Գաղ-

ղիան իտալիայէն պիտի բաժնեն. ին-
չո՞ւ ժայռերու լեռնակուտակ դէզ մը
երկու ազգաց մէջ պատուար պիտի ար-
ձանանայ, որոնք կ'ուզեն իրարու մեր-
ձենալ և իրարու ձեռք տալ. շատ ժա-
մանակ չանցնիր և Մոն-Սընի ան-
դունդները կը սկսին սաստկակոծ ծե-
ծուիլ, և քիչ ատենէն թուշուն շողե-
կաւքը իտալիան Գաղղիոյ ստորոտը
պիտի տանի: Ասոնք ամենքը և ասոնց-
մէ զատ ուրիշներ ալ մարդկութեան
զարմանալի մեծագործութիւններ են,
որոնց մեծութեան, վսեմութեան և օգ-
տակարութեան յիշատակները պիտի
չեղծանին և պիտի չմոռցուին, մինչև
որ ուրիշ գործեր՝ քան զառաջիններն
աւելի վեհ և վսեմ, աւելի ճարտար, և
աւելի օգտակար մարդկային ընկերու-
թեան՝ առաջնոց վրայ քող մը չձգեն:

Կը թուի որ մարդիկ ալ իրենց բո-
վանդակ կարողութեամբ այս բանա-
ճշգրտել կը ջանան. մոռնալ և մոռցնել
տալ առաջինները, անոնց տեղ նորեր
հնարելով, և հասարակաց զարմանքը
և մտադրութիւնը ասոնց վրայ դարձը-
նել տալով: Այսպիսի մտածութեան մը
արգասիք կրնանք համարիլ Գաղղիոյ
Անգղիոյ հետ միացնելու առաջարկու-
թիւնը. բայց թէ կրնայ բաղդատուիլ
այս՝ հեռագրութեան և երկաթուղոյն
գիւտերուն հետ. — այնչափ՝ որչափ որ
առաջնոց ստուգութիւնը և երկրորդին
անստուգութիւնը կը թողու ընել այս
բաղդատութիւնս. վասն զի բաղդա-
տութեամբ առջի գիւտերուն կարևորա-
գոյն ըլլալը ճանչնալուատեն, երկրորդին
ալ քան զանոնք մեծագործութեամբ
գերազանցելը պէտք է ճանչնալ:

Ամենքը գիտեն որ Գաղղիան Անգ-
ղիոյ հետ միացնելու մտածութիւնը և
նոյն իսկ առաջարկութիւնը նոր բան
չէ, այլ յայնմ է նորութիւնը, որ հիմա
առաջարկութեան կերպը փոխուած է:

Առաջին անգամ Գաղղիան Անգղիոյ
հետ (Բա-տը-Ֆալէի նեղուցով) միացը-
նելու մտածութիւնը հասարակաց ներ-
կայացուց՝ իմաստնոց քննութեան տակ
ձգելով զայն, Պ. Թոմէ կամոն գաղ-